Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 342 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված բազմազավակ, ներկայումս Նալբանդյան համայնքում բնակվող, անշարժ գույք չունեցող ընտանիքների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրում կառուցել թվով 4 բնակելի տուն՝ յուրաքանչյուրը համակցված երկու բնակարանով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայր բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	276,890,480 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված բազմազավակ, ներկայումս Նալբանդյան համայնքում բնակվող, անշարժ գույք չունեցող ընտանիքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի հունիսի 3-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրում նախատեսվում է կառուցել թվով 4 բնակելի տուն (յուրաքանչյուրը համակցված երկու բնակարանով)՝ 272,530,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունիսի 3-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը. 2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրում թվով 4 բնակելի տների (յուրաքանչյուրը համակցված երկու բնակարանով) կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ՝ 2,725,300 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունիսի 3-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը. 3) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրում թվով 4 բնակելի տների (յուրաքանչյուրը համակցված երկու բնակարանով) կառուցման շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ՝ 1,635,180 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունիսի 3-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) նախատեսվում է կատարել տարածքի ուղղաձիգ հարթեցում տների կառուցման համար, կառուցել թվով 4 բնակելի տուն (յուրաքանչյուրը համակցված երկու բնակարանով)՝ անցկացնել ներքին ջրամատակարարման և կոյուղու, գազամատակարարման, էլեկտրամատակարարման և ջեռուցման ցանցերը, անցկացնել արտաքին ինժեներական ցանցերը, կատարել ներքին հարդարման աշխատանքները՝ 272,530,000 դրամի չափով. 2) տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 2,725,300 դրամի չափով. 3) հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում՝ 1,635,180 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Արմավիրի մարզպետի աշխատակազմ

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

16.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ